



51. ՆԱԶԱՐ ՔԵԶԱ

Ժամականով մե պառավ ա հըլնում: Էս պառավը մե լողը տղա ուներ ու մե քանի խավ, էլ բան չուներ: Էս լողը մեր գեղի Լուիթոյ նման էր աշխատում: Մերն էր աշխատում, տղին պախում: Ուելսճ պառվի մատները քրքրվեր էր, էնքան ըստուրը-ընդուրը խաց էր թխե, լվածք էր արե: Տղի հեչ վեջը էր: Գալում էր տունը, խացը բուռնում էր, էթում էր պատի ճժերի խետ սաղ օրը խաղում էր: Հիրկուն էլ, որ մե չիչ մուլթը հընգնում էր, տնից էլ դուս էր գալում, էնքան վախկոտ էր: Մերն իշքան աղաչում էր, խրատում էր, բան դուս էր գալում: Ուավերին կուտ ու ջուր էլ էր տալում, որ մերն էթեր մե գործի: Մե օր հիրկուն մոր խետ նստում են դռան մոտը, խոսում են:

Լուսնակ քչեր էր, տղեն հիշկում ա երգինքն ու ասում ա.—Աղե՛, այ քնրվան կղրելու քչեր: Մարթ էթա քնրվանը կղրա, տա հա-ռեչն ու բերա տունը լցա: էլ ի՞նչ աշխատանք, ի՞նչ բան, չանքի ջանքի վերչն ուտա, չի խլսի:

Մերը ձեն չի անում ա, յավաչ վեր ա հըլնում, մտնում ա տունը, դուռը հետևից փակում ա ու ասում ա.—Դե գնա քնրվան կղրա՛, բե՛ր, չանքի ջանքիտ վերչը ճե՛ր:

Նաչար Քեչան սկսում ա գոռալ, լալ, մերը հեչ բանի տեղ չի դնում:

—Ա՛յ մեր, կէթամ ընձի քարից կըքցեմ, կէթամ ընձի ջուր կըքցեմ, դուռը բաց, ասում եմ:

Մերը ձեն էլ ա չի անում:

Տղեն որ տենում ա մերը հաստատ որոշեր ա, որ տուն չըթողա, ասում ա.—Աղե՛ ջան, հէսօր թող մնամ, հառավոտ հըլնեմ, գլխա-արև վերցում, էթամ, էլ քո հերեսը չըգամ:

Մերն էլի ձեն չի անում:

—Աղե՛, —ասում ա Նաչար Քեչան, —մե քանի ձո՛ւ տու, խա՛ց տու, մե կծիկ էլ թե՛լ տու, հիմի էթում եմ:

Մերը տղի ուղածները բերում ա, դռան արանքից տալում ա ու նորից դուռը փակում ա վրեն:

Նաչար Բեչան ուզում էր մորը խափա, որ մերը դուռը բացա, Հինքը ներս մտնի, Հրմա մերը էնքան չուշուտ էտ բոլորը տվեց, որ չանքի տղեն խաբար Հելավ, մերը դուռը փակեց:

Նաչար Բեչան վերցում ա մոր տվածը, էթում, ջեղից դուս ա գալում, մե սև խերկի մեչ պարկում, քնում ա: Հառավոտ վեր ա հըլնում, տնում ա՝ աղվեսները ոտի մատները կոծեր են ու նստեր կողը:

Աղվեսները Հիմանում ին, թե մեռուկ ա: Ըստե Նաչար Բեչան ձեռը քցում ա, մե աղվեսի բռնում ա: Ուզում ա աղվեսին սպանա:

Աղվեսն ասում ա.—Ա՛յ Նաչար Բեչա, դու ընձի մի՛ սպանա, ես չեզի խելք սովրցում:

Նաչար Բեչան ասում ա.—Ի՞նչ խելք բղի սովրցուս, աղվե՛ս, ես քո չափ է՞լ խելք չունեմ:

Աղվեսը ծծողում ա, ասում ա.—Նաչա՛ր Բեչա, քո գլխի մեչը խելքի թրիչա չըկա, որ քո գլխի մեչը խելք հըլներ, էս քսանըխինգ տարի ա դու բա մե գործ չի՞ր անի, մորտ չի՞ր պախի:

Նաչար Բեչան մնում ա զարմացուկ: Էս աղվեսը ի՞նչ ա հիմա-նում, թե Հինքը լողը ա, չի աշխատում:

Ասում ա.—Աղվե՛ս աղա, բա ի՞նչ անեմ, ի՞նչ խելք ես սովրց-նում, որ չեզի բաց թողեմ, էթաս:

Աղվեսն ասում ա.—Հառավոտ կէթաս էս յանը: Ըստե մե ջուր ա էթում: Կէթաս էտ չայի կրաղը կըկայնես, կարմունջ չըկա: Էրկու դև կըզան, չըվախենաս, դեները ուժով են, Հրմա գլխների մեչը մե գարու չափ էլ խելք չըկա, կըխափես: Դեները որ կըմոտնան, կուզեն չեզի ուտեն: Դու ասա. «Դեներ էկեք ուժներս փորցենք»: Դու ես դեների խետ որ ուժտ կըփորցես, ձեռտ կըվերցնես մե քար ու մե ձու կըճզմես, կասես, տեսա՞ք, դե դուք էլ վերցեք Էրկու քար ու սխմեք: Թե ձեթ խանեք, դուք եք ուժովը, թե չըխանեք, ես եմ ուժովը: Ով որ ախտվի, տուգանք տա: Ես իմ գլխն եմ գրավ դնում, դուք էլ մե մեչոք ոսկի գրավ դրեք: Դու կախտես, դեներին կըխափես, մե մեչոք ոսկին կառնես:

Նաչար Բեչան համաձայնվում ա, աղվեսին բաց ա թողում, աղվեսն էթում ա, գլխն ազատում ա, էս տղեն էլ հըլնում, էթում ա չայի կրաղը նստում ա: Մեկ էլ տենում ա դեներն էկան:

Էն մե դեն ասում ա.—Ինչ լավ թիքն հոաստ էկավ, ագոաստ կանենք:

Ոոսալով գալում են Նաչար Բեչի յանը, Նաչար Բեչեն ասում ա.—Շատ եք վոագնում, հըլա ագոաստի ժամանակը չի, վայ թե ատամներտ քարի դեմ առնի:

Դեւերը զարմանում են, համ էլ էս տղի ասածից սրտները կասկած ա հընգնում, թե չըհըլնի՞ հիրանցից ուժով ա:

Որ դեւերը մոտնում են, Նաչար Քեչեն ասում ա.— Դեւ'ը, էկեք ուժերս փորցենք: Ես վերցում եմ այ էս էրկու քարը, հիրար սխմեմ, ձեթ խանեմ, դուք էլ էրկու քար վերցեք ճգմե՛ք: Թե ձեթ խանիք, լավ, թե չըխանիք, տարվուկ եք: Ես իմ գլոխն եմ գրավ դնում, դուք էլ ձեր գլոխը գրավ դրեք, յա թե ձեր գլխի տեղ մե մեշոք ոսկի: Ես ախտվեմ՝ իմ գլոխը կդրե՛ք, ձեզի դուրբան, դուք ախտվեք՝ ես ձեր գլոխը կդրեմ, յա մե մեշոք ոսկի տվե՛ք, գլոխներտ ազատե՛ք:

Ըստե դեւերը համաձայնվում են: Նաչար Քեչեն վերցում ա մե քար ու մե ձու, ձեռով սխմում ա, ձեթը դուս ա գալում, դեւերը վերցում են, քարերը սխմում են, փռչի յա դառնում, ձեթ դուս չի գալում: Դեւերը վախենում են, տղին ասում են, որ մե մեշոք ոսկի կըտան: Նաչար Քեչին կանչում են հիրանց տուն:

Նաչար Քեչեն ասում ա.— Ես ձեր նման սար ու ձոր ման էկող չեմ, պատվավոր մարթ եմ, պատվավոր մարթի տղա եմ, ոտով ճամբա էթող չեմ: Դե գացեք ձի՛ բերեք:

Դեւերն ուզում են էթան, փախնեն, ազատվեն:

Նաչար Քեչեն ասում ա.— Էրկսով մի՛ գացեք, մեկը թո էթա ձի՜նը բերա, մեկտ մնա ըստե, չանքի մեկէլ ախպերը գա:

Էրկու դեն էլ վախենում են մինակ մնան Նաչար Քեչի մոտը, ասում են.— Նաչա՛ր Քեչա, արի չեզի շլկենք տանենք, մեկ չի՞, յա չլկով տանենք, յա ձիով էթաա:

Նաչար Քեչեն ասում ա.— Մեկ չի, բա մե՞կ ա: Զիան վրեն կընստեմ, ձեզի կըտամ հառեչս կըքչեմ, մե քանի ճպոտ էլ մեջքներիտ կըխասցնեմ, որ հիմանաք Նաչար Քեչի ուժը: Բայց որ խնթրում եք, ի՞նչ արած, կըխե՞նք:

Ըստե Նաչար Քեչեն նստում ա դեւերից մեկի վզին, էթում ա:

Դեւը տենում ա, որ Նաչար Քեչեն շատ թեթև ա, ասում ա.— Նաչա՛ր Քեչա, դու էտքան թեթև ես, քո մեջ ո՞րտեղից ա էտքան ուժ, որ քարից ձեթ ես խանում:

Նաչար Քեչեն ասում ա.— Տենո՞ւմ ես էս ախմախին: Ես չեմ ուզում չեզի նեղութուն տա, ծանդրութունս վրետ չեմ քցում, ջիղում ես թեթև եմ, ո՞ւժ չունեմ, դե հիմի տես:

Ասում ա ու բիզը ճխտում ա դեի վիզը:

Դեւը ցավից գոռում ա.— Վա՛յ, վա՛յ, Նաչա՛ր Քեչա, շատ ծանդր ես, ծանդրութունտ վերցո՛ւ, մեռա:

Նաչար Քեչեն բիզը քաշում ա ու քթի տակը ծծողում ա:

Էթում են, խասնում են դեւերի քարանձավը:

էս էրկու ախպերը մնացած դեւերին պատմում են Նաչար Քեչի ուժի մասին: Դեւերը զարմանում են, Հրմա մտածում են. «Մեկ էլ փորցել տանք, տենանք՝ օղո՞րթ էտենց ա»:

Նաչար Քեչեն Համաձայնվում ա, վերցում ա էրկու քար, գոլխտուկ արանքը մե ձու յա քցում, սխմում ա: Որ սխմում ա, ձուն կողրվում ա, ձեթի նման ձևալով թափում ա: Դեւերը մնում են զարմացուկ:

Նաչար Քեչեն ասում ա.— Դե դուք էլ փորցե՛ք:

Դեւերն ասում են.— Ձէ՛, Նաչա՛ր Քեչա, մենք չենք կանա: Դու արի դարցի՛ մեզի մեծ, մենք դառնանք քո ծառեքը:

Նաչար Քեչեն Համաձայնվում ա ու մնում ա:

Հրմա էս դեւերի մոտը մե օրենք կար: Էտ օրենքը շատ լավ օրենք էր: Դեւերի մոտ ջոչ ու պստիկ չըկար: Բոլորն էլ բղի աշխատին: Ամմեն օր հերթով մեկը պարտավոր էր տունը ավելը, ջուրը բերեր, ճաշը էփեր, էթեր մեչից փետ բերեր: Մե խոսկով, իջքան գործ կար, էտ մեկն էր կատարում: Նաչար Քեչին էլ հերթը էկավ: Վերցուց տիկը, գնաց ջրի: Հինքը ջուրը խմավ, տիկը փչեց, ուռցուց, դրեց հուսին ու էկավ: Դեւերը տեսան, որ լինքը տիկը դրեր ա հուսին, էնենց ա գալում, կասես տիկը դարտակ հըլնի: Դեւերը շատ ծառավ ին, վազան հառեչ, որ տիկը ձեռնից առնեն, ջուր խմեն: Հլա ընդոնք Նաչար Քեչն չին խասե, Նաչար Քեչեն տիկը դրեց բերնին, օթը ֆսսալով դուս էկավ, տիկը դարտակվավ: Դեւերն էլ հիմացան, որ մե տիկ ջուրը մե անքամից խմավ, վախեցան ու չիվար կայնան:

Նաչար Քեչեն ասավ.— Դե, ես իմ պարտը կատարի, ջուրը բերի, հիմի ձեր դորն ա, գացեք մեկ էլ բերե՛ք, չեք բերի՝ ծարա՛վ մացեք:

Դեւերից մեկը վերցուց տիկը, գնաց ջրի:

Դեւերը նստան խորուրթ արին, թե ինչ անեն, որ Նաչար Քեչից ազատվեն:

Նաչար Քեչեն ըտոնց խորուրթը լսում ա: Էս դեւերը քառասուն կանթանոց տասը պղինձ ունին: Դեւերը որոշում են էս պղինձներով ջուր տաքցնեն, եռման ջուրը քնուկ տեղը լցեն Նաչար Քեչի վրեն: Նաչար Քեչեն սուլթխատ ա տալում, ըստոնք ջուրը բերում են, տաքցնում են: Դեւերն զբաղվուկ ին ջուրը բերելով ու տաքցնելով, Նաչար Քեչեն գողտուկ հելավ, մե քոթուկ բերեց դրեց հիւրան յուրդանի տակը, հինքը գնաց հուրիչ տեղ պարկավ: Դեւերը զազանը զազանի հետևից բերին ու լցին Նաչար Քեչի տեղի վրեն ու փախան: Որ դեւերը փախան, Նաչար Քեչեն էկավ, քոթուկը դեն քցեց, մտավ տեղն ու քնավ: Հառավոտ դեւերն էկան տեսան՝ Նաչար Քեչան պարկուկ ա: Մացին զարմացուկ:

Նաչար Քեչեն ասավ.—Տղե՛րք, հըլա տեսեք, քնուկ տեղ էնքան եմ քրտնե, որ քրտնքից սաղ տեղաշորը ջուր ա դարցե:

Դեւերը ձեն չարին, սրտներից արուն ա կաթում: Զարմանում են, թե էս ի՞նչ տեսակ մարթ ա, որ եռցրուկ ջուրն էլ վրեն չի հրեում, ասում ա, թե քրտինք ա:

Նաչար Քեչին դեւերն ասում են, որ՝ հէսօր քո դորն ա, գնա մե՛շից փե՛տ բեր, կրակ անենք:

Նաչար Քեչեն ասում ա.—Ամմեն օր հո ես փետի չե՞մ էթա: Գացեք էրկու հազար մետր պինդ թո՛կ բերեք, էթամ, քցեմ մեչեն շկեմ, բերեմ մեր զաղի մոտը դնենք, ուզած վախտը կդրենք վառենք:

Դեւերը որ էսի լսում են, վախենում են, հիրանք հիրանց ասում են.—էս վայրենին վայթե էթա սարը բերա, քցա մեր վրեն, մնանք տակը, մեռնենք, թո չէթա, մենք կէթանք:

Դեւերից մեկն ասում ա.—Լա՛վ, Նաչա՛ր Քեչա, դու մի՛ գնա, մենք կէթանք:

Դեւերը որոշում են, որ Նաչար Քեչան քնի, վերցուն քառասուն բալթա հընգնեն Նաչար Քեչի ջանին, հազար կտոր անեն, դեն քցեն, բոլ հելավ ըտու ձեռին տանջվեն:

Նաչար Քեչեն էս որոշումն էլ ա լսում:

Բերում ա քոթուկը, դնում ա յորդանի տակը, հինքը պախկվում ա: Ըստոնք բալթեքը վերցում են, ամմեքը մե յանեն սկսում ա տալ: Զարկում են, գարկում, բալթեքը վերցում են ու էթում պախկվում:

Որ դեւերն էթում են, Նաչար Քեչեն քոթուկը դեն ա քցում, հինքը մտնում ա տեղը ու ջուվա թե նոր ա զարթնե, ասում ա.—Ա՛յ դեւեր, հըլա մո՛տ էկեք, էյրազիս կարկութ էր գալում, յորդանա էնենց էր շխլշխկում, որ զարթնա:

Դեւերը որ տեսում են սաղ ա, հիրանց բալթեքի հարվածները կարկութի խետ ա համեմատում, զարմացան, հըմա բան չասին:

Էլի նստան խորուրթ արին, թե ինչ հնարով Նաչար Քեչից ազատվեն:

Խորուրթ են անում, որոշում են Նաչար Քեչին իրեք մեշոք ոսկի տան, էթա հիրանց տունը:

Հիրանց որոշումը ջոջ դեն ա հայդնում, ասում ա.—Ա՛յ Նաչար Քեչա, մենք դեւեր ենք, էս զաղեքի մեչը աբրելու սովոր ենք, դու ափսոս ես, նեղութուն ես քաշում, արի չեզի իրեք մեշոք ոսկի տանք, տա՛ր ձեր տունը, ծախա՛, աբրի՛, որ խլսավ, էլի կըտանք:

Նաչար Քեչեն էլ էտ էր ուզում, ասում ա՝ խա՛, տվե՛ք: Ոսկին բերում են, դեւերից մեկը շլկում ա, Նաչար Քեչեն էլ նստում ա վրեն, էթում ա հիրանց տունը:

Ոսկին բերում են, տեղավորում են, դեք ետ ա դառնում:

Դեք, որ ետ ա դառնում, ճամբեն պատահում ա էս աղվեսին:

Աղվեսը դեին ասում ա.—Դե՛ օխպեր, հո՞ւստ ես գալում:

Դեն ասում ա.—Նաչար Քեչից անջաղ պրծանք: Իրեք մեշոք ոսկի տարա, էկա:

Աղվեսը ծծղում ա, ասում ա.—Ա՛յ օխմախ դե, դուք Նաչար Քեչից վախեցա՞ք, ես ընդըրա ոտներն եմ կռծե, հըլա թոփլում ա: Գնա ոսկիտ ե՛տ բեր, ամոթ ա, դուք դեի ցեղ եք, խողածնից վախենում եք: Բա որ դուք մարթից վախենաք, մենք՝ աղվեսներս, բղի էթանք մեզի քցինք ջուրը:

Դեն ամանչում ա, ետ ա էթում, որ ոսկին բերա:

Նաչար Քեչեն որ տենում ա դեն էկավ, մորն ասում ա.—Աղե՛, դեն էկավ, ես կըմտնեմ տունը, որ դեք կըգա, դու ընձի ձե՛ն տու, ասա՛՝ ա՛յ Նաչար Քեչա, էս մե ամիս անոթի եմ, էս մե պստի դեք բերեր ես, ես ո՞ր ատմիս տակը դնեմ, ել գնա՛, խինգը դե՛ բե:

Դեք, որ էս խոսկերը լսում ա, ետ ա դառնում ու փախնում ա: Պատահում ա աղվեսին:

Աղվեսն ասում ա.—Ա՛յ դե, լեղապատառ հո՞ւր ես փախնում:

Դեն ասում ա.—Ա՛յ խորամանկ աղվես, դու ուզում իր ընձի էն պառավն ուտա՞:

Աղվեսին բռնում ա քաշում ա, մեջտեղից ճղում ա քցում ա:

Մե խանք փախնում ա, խասնում ա զաղեն, օխպերներին ասում ա.—Հե՛լե՛ք ըստուց, փախնենք: Մերը տղին ասավ, որ կէթաս ամմեն անքամ խինգը դե կըբերես, որ ես ուտեմ: Շո՛ւտ արեք փախնենք, քանի Նաչար Քեչեն չի էկե:

էտ օրվանից էլ էս երգիքը դե չի մնում: Նաչար Քեչի օխից բոլորը փախնում են: